



177

5 II. 2





ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առաւօրեայ օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով.

Յայտարարութիւններ շաբաթ փճարում են
իրաւաբանիւր բառին 2 կոպեկ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԿԱՅ 1894 ԹԻՒԱԿԱՆԻՆ

22-րդ ՏԱՐԻ

22-րդ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, Նոյն դիրքով, Նոյն պրոպագանդայով և Նոյն ուղղութիւնով: Մենք ստանում ենք տեղական շեմադրութիւններ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարեկանը՝ 6 ռուբլի, ամսականը՝ 1 ռուբլի:
Գրվում «ՄՇԱԿ»-ը կարելի է ԽՐԱԳԱՐԱՍԱՆԸ (Բաղրամյան և Բաղրամյան փողոցների անկիւնում):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ»-ը գրվում շաբաթ, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելու, պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրութեան կողմից. Ծրագրվում գործունէութիւն.—ՆԵՐԿԱՅ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Կարգադրական առողջապահութիւն. Կրթական գործը մեզ մօտ. Բնակչության ժողով. Մասնագործութիւն. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Երօթայի քաղաքական գործութիւն. Միլիտանտի ժառանգութիւն. Եղեղաղի կուր. Նոր տարեկան ընդունելութիւնը. Նամակ Շիկլարիայից-Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ (Բաց նամակներ).—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԱՆԿԱՐԿՆԵՐ.

ԽՐԱԳԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏԵ

Այսօր հրատարակում ենք «Մշակ» 22-րդ տարեշրջանի առաջին համարը: «Մշակ» երկրորդ համարը, առանձին պատճառով, լոյս կը տեսնէ յունվարի 6-ին, երրորդ համարը յունվարի 11-ին, և ապա նրանից յետոյ, սովորական կարգով, շաբաթը երեք անգամ:

Այս տարեկան փերձին էլ, ինչպէս և առաջ, մեր բաժանորդներէն շատերը դիմում

էին մեր խմբագրութեան, առաջարկելով «Մշակ»-ը, դարձնել ամենօրեայ, կամ դնել շաբաթը հինգ անգամ հրատարակել:

Մեր բաժանորդների և առհասարակ հասարակութեան այդ ցանկութիւնը մեզ համար վերին աստիճանի յարգելի, վերին աստիճանի խրատութիւն է, քանի որ դա մի նոր ապացոյց է, թէ որքան «Մշակը» պահանջ է դարձել մեր հասարակութեան որոշ մասի համար, և որքան այդ հասարակութիւնը կապված է «Մշակ» և նրա ոգին, կեանքը, գոյութիւնը, և նպատակը կազմող հասարակական գաղափարների և ձգտումների հետ:

Սակայն, հասարակութեան այդ ցանկութիւնը, այն է «Մշակը» ամենօրեայ դարձնելը, որ և խմբագրութեան ցանկութիւնն է, ներկայ 1894 թիւին չենք իրադրել, և չիրադրեցինք պատճառով ոչ թէ բաժանորդների թիւի խնդիրն է, —ընդհակառակը «Մշակ» այժմեան աշող բաժանորդագրութիւնը կատարեալ իրաւունք է տալիս «Մշակը» ամենօրեայ դարձնել, —այլ ուրիշ

հանգամանքներ, որոնց մասին հասարակութեան հաշիւ տալ մենք անկարող ենք: Այդպէս ուրեմն ներկայ 1894 թիւին էլ «Մշակը» կը հրատարակվի շաբաթը երեք անգամ.—իսկ թէ ինչ կը լինի 1895 թիւին, այդ ապագայի խնդիր է:

Մտնելով 22-րդ տարեշրջանը, մենք կը ցանկանայինք մի համառօտ հաշիւ տալ մեր անցեալ տարեկան գործունէութեան մասին: Սակայն, հանգամանքների բերմամբ, «Մշակը» 1893 թիւականին միայն երկու ամիս հրատարակվեց, և այդպիսով մեր լրագրի գործունէութիւնը 1893 թիւին այնքան կարճատեւ եղաւ, որ համեմատութեան տարրական կանոնները մեզ թոյլ չեն տալիս կանգ առնելու այդ երկու ամիսեայ գործունէութեան վրա:

Այժմ մտնելով նոր 1894 թիւի տարեշրջանը, մենք մեզ հեռու ենք պահում մեծ-մեծ խոստումներից: Հրաշքներ չենք կարող գործել. բայց ստանձնելով մի այնպիսի պատասխանատու գործի ղեկավարութիւնը, ինչպիսին է «Մշակը» նրա փառաւոր անցեալից յետոյ, մենք անկեղծ սրտով, բայց ճակատով խոստանում ենք հայոց հասարակութեանը՝ փիշաք բարձր պահել «Մշակ» գրողակը՝ չը թողնել, որ ունեման այն գաղափարները և սկզբունքները, որոնք «Մշակ» փայլը և հողին են կազմել. խոստանում ենք անաբաւ, անբեւ պահել տաղանդական խօսքը, չը շեղվել աղմուկ, անկաշառ մամուլի որոշ զմարտի շաղկից, և նուիրվել այս գործին մեր բոլոր ոյժերով, մեր ամբողջ գործունէութեամբ:

Թէ որքան արդիւնաւէտ կը լինի այդ տեսակ գործունէութիւնը,—այդ ցոյց կը տայ ապագան:

Իսկ մեզ համար՝ «Մշակ» անցեալը մեծ գրաւական է:

Կոչված է կուլտուրական մեծ դեր խաղալու խաւար, վայրենի Արփայի մէջ՝ տարածվում և բոսայտային քաղաքակրթութիւնն ունի իսկ այն ազգերի մէջ, որոնք մի ժամանակ նրան անի տակ էին տալիս, իբրեւ տարւել, իբրեւ միայն նպատակ լինելու համար ստեղծված անընդունակ տարրի...:

Թող այդ գաղափարը սիրտ տայ մեր ժողովրդին, թող այդ կուլտուրական միասնան ոգեւորմանակալից հայ սերունդը:

Այն հիւսիսայինում, որ այժմ նկատվում է մեր կեանքի մէջ, ժամանակակից է, անկասկածաբար, ժամանակակից է և այն ամպոլութիւնը, որ նկատվում է մեր մտքի, մեր գրականութեան, մամուլի, մեր ժամանակակից հասարակաց ձգտումների մէջ:

Ձը կան այժմ, ճշմարիտ է, Գրիգոր Արթուրյանի, Պատկանեանների, Բաֆֆինի, և ոչ էլ Ներսէս Աւար-ժապետեանի սեղը բունդներ, բայց գաղափարը կայ ինքն այդ գաղափարը կը ծնի մտքի նոր մշակներ, հասարակաց խիղճը արթնացնող նոր քաղաքիչներ, ժողովրդին նուիրված նոր սպասարկներ: Մեր ժողովրդը ինքն է որոշել իր բաղդը և իր ապագան՝ իր հակումներից, իր ձգտումներից անցնելով ժամանակակից քաղաքակրթութեան կողմը:—Կա է ամենապիտանողը:

Ուրեմն մոտենալով առօրեայ մանր-մունր անաշտութիւնները, մոտենալով այն ընդհանուր հիւսիսայինում, որ տիրում է մեր հասարակութեան վրա, չենք ձգնել այն մեծ կորուստներից, որ կեանքը, և համարված լինելով, որ էթէ ոչ այսօր, ղէթ վաղը՝ կարթնանայ հասարակաց թմբում խիղճը, մտնելը նոր տարվայ մէջ նոր յոյսերով: Եւ այստեղ խորին, անփոփոխելի համոզմունքն է, որ կապում է միմեանց հետ մարդկանց, սիրտ է

ԾՐԱԳՐԱՎԱՅ ԳՐԱԴԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

«Մշակ» քսաներկուերորդ տարեշրջանի սկզբնաւորութեան առաջին օրը յիշեցնենք մի երկու խօսքով այն կէտերը, որոնք ծառայել են իբրեւ հիմք նրա երկարամեայ գործունէութեան: «Մշակ» անցեալը մի մեծ ծրագրի մշակումն է իրադրութեամբ և եղի, որին հետեւել է «Մշակ» տաղանդաւոր հիմնադիրը, առաջ տանելով նրան երկարակյալ կամքով և մեծ տոկոսութեամբ և որը շարունակելու կոչված է այն գաղափարական կոչումը իրեն, որ գործակցել է «Մշակին» և համարել է նրան:

Քաղաքակրթութեան վերջնական նպատակն է մարդու, իբրեւ հասարակական էակի, կատարեալ գարգացումը: Ամբողջ դարեր, փիլիսոփաների ձիգն ու աշխատանքը ուղղված են եղել դէպի մի կէտ—ժողովրդի նիւթական և բարոյական բարգաւաճումը, ժողովրդի բոլոր կարողութիւնների բազմակողմանի և ներգաշնակ արգասաւորումը: Մարդկութեան բարեբանները և մարդաբանները բարձրացել են կախաղան, այդպիսի խարոյկների վրա, մաշել են իրանց կեանքը տանջանքների և զրկանքների մէջ՝ զորոված այն սիրուց, որ ունեցել են դէպի ձգմարիտը, գաղափարական, լուսաւորը և յաւիտենականը: Նրանք, աւելելով մարդկութեան անխնայ և փրկարար իղէպներ, կտակել են անհուն սէր դէպի գաղափարականը, և անդրդիւրի ձգտում դէպի ժողովրդական կրթականութեան նպատակը գործունէութեամբ:

Մեծ է նպատակը, գրաւել հեռուում ցուրացող լոյսը հոյակապ՝ մեզ խոստացած երջանիկ կեանքը. բայց նրանց հասնելու համար պահանջվում են անձանիք աշխատանք և տոկոսութիւն:

Նոյն իսկ եւրօպական երկիրները, որոնք մեզից շատ վաղ են գտել իրանց գարգացման շաւիղը և առաջ են ընկնում իրանց

տալիս ընկճվածներին, ոգեւորում է յուսահատութեան բոցներին, ընդունով է դարձնում մարդուն տոկոս, դժուար, մաշող աշխատանքներին, և ոյժ տալիս՝ բարձրանալու առօրեայ մանր-մունր, գծով հաշիւներից, և նայելու դէպի ապագան ժպտալի երեսով, բայց ճակատով, ոգեւորված ըստականութեամբ....

Նոր տարի է: Մոտենալով հինը, մոտենալով յուսահատեցնող անցեալը, թափ տանք մեզանից հնութեան փոշին. մոտենալով այն հաւանքը, որ երկար դարեր կրից մարդկային ազատ միտքը և գաղափարը, ծաղրի տանք այն յաղթանակը, որ տարած դարերի ընթացքում բունաւորի գալիսունը և դաճի կայունը. չը հիստորիկները հասարակական անկախութեան իրաւունքը, յոյսով և նաւատով նայելով միշտ դէպի առաջ, միշտ դէպի ապագան....

Այդ ապագան թող լինի մեր իղէպը, մեր հաւատը, մեր յոյսը:

Հեռու է, այդ, սպիտակ իղէպը.—բայց անհասանելի չէ. հաւկար է տոկոս աշխատանք, անձուրիութիւն, մտքի թռիչք, ժամանակ:

Ինքը ժամանակը մեզ կը մօտեցնի նրան: Մարդկային մտքի պատմութեան մէջ ամեն մի տարին մի քայլ է դէպի այդ իղէպը, մի քայլ դէպի առաջ, մի քայլ դէպի երջանիկ ապագան:

Մի տարի անցաւ.—տես է մարդկութիւնը մի քայլ հեռացաւ իր տխուր անցեալից, և մի քայլ մօտեցաւ իր երջանիկ ապագային:

Ժամանակը՝ առաջադիմութիւն է:

Նոր տարին՝ առաջադիմութեան մի քայլ:

Ուրեմն շնորհաւոր նոր տարի, շնորհաւոր առաջադիմութիւն:

Խ. Մարտիան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՎԵՆԱՐԿՆԵՐ

Նոր տարի

Ողբան դարեկան են այդ խօսքերը, որքան գրաւիչ: Կարծես թէ այդ խօսքերի մէջ թաղնված է մի մեծ յոյս, մի յափշտակութիւն, նոյնքան քաղցր, որքան պատանեկան ցնորքներ, նոյնքան ուղեորիչ, որքան բանաստեղծի քնարը:

Նայեցէք. ահա մի դաժան դէմք, որ վայրկեանաբար փայլում է քաղցր ժպիտով. ահա մի տխուր, վշտացած, ծանր հոգեւոր տակ թողված սիրտ, որ սկսում է բարբախել. հենց որ հնչում է «Շնորհակաւորն ուր տարի»:

Նոր տարի.—դա յոյս է՝ ապագայի համար, գերեզման՝ անցեալի համար: Յոյս,—մարդկութեան համար, որ ուղղում է ապրել, առաջադիմել, թօթափել իրանից ճնշող, մաշող հոգեւոր և տանջանքները: Գեղեցիկ անցեալի համար, որ իր հետ տանում է դէպի պատմութեան խորքերը մարդկային ցեղի կրած անթիւ, անհամար տանջանքները, աննկարագրելի վշտերը....

Բաժանվեց այդ անցեալից: Այդ անցեալը մեզ ոչինչ չը տուեց: Ահա պատկերացում էս՝ իմ առաջ պատմական անցեալը, որ այնքան հրճուանք է պատճառում հնազանդներին. և ինչ,—մի անապատ, որի մէջ տեղ տեղ միայն երևում են օազիսներ, և այն էլ դարերով միմեանցից բաժանված: Կարելիով ճնշված, քնած, անարթութեան մասնված մի ժողովուրդ, որը փոխանակ մտածելով՝ արտապրում էր, փոխանակ բողբոջում՝ աղօթում էր....

Այդ պատմութիւնը, ճշմարիտ է, ծնեց մի Գրիգոր Լուսաւորիչ, մի Սահակ, մի Մեսրոպ, նա տուեց մի վարդանանց պատերազմ,—բայց դրա հետ միասին նա ստեղծեց կաթողիկոսներ, թաղաւորների և իշխանների մի ամբողջ լեզեն, որոնք օտի տակ տուեցին այն բոլորը, ինչ յղացել էր Լուսաւորիչ և Սահակների հանճարեղ զիններում, արմատախիւ արեցին ժողովրդի հոգեւ մէջ այն բոլորը, ինչ ներշնչել էր հինգերորդ դարը:

Անցան դարեր դարեր ետեւից, և միայն այդ դարերն են, որ կտրոււմ են մեր պատմութիւնը.—երկար, շատ երկար դարեր,—բայց անբոլանգակ:

Եւ ինչ մնաց մեզ այդ երկար, պատմական պատկերների անցեալից, բազմադարեան պատմութիւնից,—մի քանի հարիւր կիսակործան վանքեր, դեղնած, փոշիով ծածկված ձեռագիրներ, և մի փառաւոր անշարժութիւն, որը խաւարածիւնների լեզուով կոչվում է աղգային աւանդութիւն....

Մեր ամբողջ անցեալը՝ մեր կենդանի ժողովուրդն է: Մեր յոյսը՝ նոր կեանքը: Այդ նոր կեանքը իր կուր վաղուց է յայտնել պատմական անշարժութեան այն օրից, երբ ժամանակակից հայ մտքի մշակները բայ արին քաղաքակրթութեան զօրեղ հոսանքը՝ դէպի մեր ժողովրդի փակված, կղզիացած կեանքը, ինչպէս կենսատու ջրի հոսանքը՝ դէպի խաղաղացած, չորացած հողը....

Սկսված քաղաքակրթական գործը՝ քաղաքակրթական մեծ ազգայն է խոստանում: Ո՞վ գիտէ, այն ժողովուրդը, որին,—ինչպէս մեր վարդապետներն են ասում,—նախախնամութեան ձեռքը պահեց, պահպանեց երկար դարերի ընթացքում, որը՝ չը նայած իր կրած անթիւ, անհամար հալածանքներին, տանջանքներին, անցաւ կրակի և արեւան միջով, և հասաւ մինչև ներկայ ժամանակը, ո՞վ գիտէ, ասում ենք, գուցէ այդ ժողովուրդը

բոլոր ուժով և եռանդով, իսկապէս դեռ քիչ բան են իրագործել ժողովրդի մեծամասնութեան համար: Ամենակրթված երկիրներում անգամ ժողովրդի մեծամասնութիւնը, մասսան, դեռ ձեռք չէ բերել կեանքի նիւթական ապահովութիւն, զուրկ է գաղափարական ուրախութիւններից, բարոյական ամուր սկզբունքներից և բաւարար մտաւոր կրթութիւններից:

Ուրեմն որչափ աւելի մենք, ասիական ճշնող և խնդրող կաշխատողները նոր աչք բաց արած մի փորձիկ ազգ, պէտք ունենք ամենաեռանդուն, ամենաուժեղ գործունէութեան, որպէս զի կարողանանք ժամանակին օգտուել այն հոգեկան հարստութիւններից, որ արդիւնաբերում է քաղաքակիրթ աշխարհը իւրաքանչիւր օր ու ժամ:

Մշակը իր հիմնվելու օրից մինչև այժմ անընդհատ հրաւեր է կարդացել դէպի եւրօպական քաղաքակրթութիւնը և անխնայ պատկերացել և հարուստել է մեր ժողովրդի անշարժութիւնը: Տարիներ շարունակ կռիւ մղելով առաջնորդութեան խոչնդոտների դէմ—նա համախմբել է այն տարրերը, որոնք կոչված են հասարակական զարգացման շարժիչ հարթիւնը:

Ահա մեր առաջ մի երկիր բազմակողմանի հարստութիւններից բաց ներկայումս անձնակ, անկարող նոյն իսկ ապահովելու իր մէջ ազդող մարդուն: Ահա այդ մարդը իր բնաւորոյ յատկութիւններով և առաջ գնալու հակումներով:

Պէտք է ճանաչել երկիրը, պէտք է ուսումնասիրել մարդուն իր բոլոր արտայայտութիւններով: Մարդը, իբրև քաղաքացի, զիւղացի, ընտանիքի անդամ, նրա հաստատութիւնները—ինչպէս են դպրոցները, ընկերութիւնները, թատրոն, մամուլ և այլն, ահա առարկաներ են իմական մշտական հասարակական հոգածութեան և քնննութեան:

Մինչև չը լինի այդ քննութիւնը, չէ կարող առաջադիմել կեանքը, մինչև տեղի չունենայ հրապարակական դատ, չէ կարող վերանայ զանցառութիւնների և չարագործութիւնների ոգին: Այդ, առաջադիմութիւնը պահանջում է, իբրև հիմնական պայմաններից մէկը—կարծիքների անկախութիւն, դատելու ազատութիւն, հրապարակական քննութիւն:

Իսկ դրանց ազդեցութեան շնորհիւ մուտք կը գործեն և կը հաստատվեն հրապարակական հաշուեւորութեան և պատասխանատուութեան սկզբունքները և կամայականութեան կը փոխարինի օրինակականութեան և ան գաղափարը:

Ոչ մի մտաւոր շարժում ոչ մի նիւթական զարգացում սակայն չէ կարող իսկապէս առաջադիմական լուրջ երևոյթ համարվել, քանի նա անփականութիւն կը մնայ սակաւթիւն անհատների, մտանկած մենապաշտութեան: Բայց երբ առաջադիմութիւնը կը հաղթի, կը տարածվի ժողովրդի մեծամասնութեան, ա մըրուի, մասսայի մէջ, նա կը դառնայ այն ժամանակ հաստատ, աւելցական և էական: Ի հարկէ, այդ մեծամասնութիւնը պէտք է կամայ կամայ և իսկական տէր դառնայ հասարակաց գործերի և ինքը լինի որոշողը իր կեանքի իրագործելով ընտրողական և ժողովրդական պայքարների բոլոր արտայայտութիւնների մէջ այն գաղափարները, որոնք տանում են դէպի հասարակաց օգուտը:

Իւրաքանչիւրը մեղանից ունի բազմաթիւ պարտաւորութիւններ իբրև անդամ պետութեան, համայնքի, հասարակութեան—մի խօսքով քաղաքացիական պարտաւորութիւններ, որոնց անխառնաբաշխ և բարեխիղճ կատարելը պահանջում են ոչ միայն լուրջ աշխատանք և անկեղծ վերաբերմունք, այլ և յաճախ անվեհեր օգի, ջերմ սիրտ, նախաձեռնող ընդունակութիւն և համոզմունքի ու հասարակաց շահերի քաջ պաշտպանութեան պատրաստականութիւն:

Ահա մամուլը կոչված է այստեղ մեծ դեր կատարելու հասարակական կեանքի մէջ, մի կողմից ներկայացնելու այն, ինչ կատարվում է կեանքի մէջ, միւս կողմից յիշեցնելու այն բարձր գաղափարների, այն մեծ նպատակների մասին, որոնց պէտք է ձգտի հասարակական կեանքը: Մամուլը մշտական խիճան պէտք է լինի դէպի անդադար շարժում և առաջադիմութիւն:

արժուն պահելով հասարակական խղճման անբեր, պէտք է պատրաստի հոգ առողջ հասարակական կարծիքի կազմակերպութեան համար:

Ա. Բ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՐՈՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱԳԱՀՈՒԹԻՒՆ

Գպրոցական առողջապահութիւնը այն մեծ կարևոր խնդիրներից մէկն է, որը կը օգտագործւի այսօր զբաղեցնում է թէ հիգիենիստներ և թէ մանկավարժներ միտքը. իսկ մեր մէջ այդ կենսական խնդիրը դեռ քիչ է չօղտված. մարդ դարձնում է մեր մանկավարժների, դպրոցական գործի ղեկավարների այս յանցանքը անտարբերութեան վրա:

Գուցէ ոչ մի խնդրում մենք այնքան յետ չենք մնացել ժամանակի հոսանքից, որքան դպրոցական հարցում: Մեր ուսումնարանական վարչութիւնները, մեր մանկավարժները այն աստիճան անուշադիր են դէպի արդի դպրոցական առողջապահութեան կանոնները, որ մարդ երբեմն հարց է առաջարկում իրան, թէ ծանօթ են արդեօք նրանք գոնէ մասամբ այն ահագին շարժմանը, որ կատարվել է և շարունակում է կատարվել կը օգտագործի կրթական աշխարհում: Տեղեկութիւն ունեն նրանք արդեօք այն կենսական խնդիրների մասին, որոնք են—մտքի յօդանոսութեան խնդիրը, մանկական մարմնամարզութեան, մանկական խաղերի խնդիրները, աշակերտին պատկերա խնդիրը, նորագոյն առողջական դասաւորութեան ձևը և այլն, որոնց մասին այժմ մի մեծ գրականութիւն է կազմված:

Մեր ուսումնարանական գործի ղեկավարները անտարբեր են մնացել մինչև այժմ դէպի դպրոցների առողջապահական-բժշկական մասը: Նրանք չեն զբաղել մինչև անգամ հիւսնող երևիւյթներին բժշկական օգնութիւն հասցնելու կարիքը նոյն իսկ մեծ քաղաքներում: Ոչ մի ուշադրութիւն չէ դարձվում ոչ դպրոցի շէնքի յարմարութեան, ոչ դասարանների լուսավորութեան և տաքացնելու ձևի, ոչ նստարանների յարմարութեան, ոչ արտաքինների մաքրութեան և արտահանութեան վրա:

Ներկայանքին ուսումնարան ընդունելիս չեն հարցնում, թէ նրա կազմութեամբ թող կը սայ արդեօք նրան ուսումն առնել, և ամեն հիւանդութիւնների տէր մասնակներ նստում են մեր դպրոցների նրա տարանների վրա: Աշակերտների նստելու տեղը որոշելու ժամանակ նկատի չէ առնվում ոչ նրանց հասակը, ոչ տարիքը, ոչ ֆիզիկական զարգացումը, ոչ առողջութեան և լուրջութեան սրբութիւնը: Դասաւորւցակը կազմվելու ոչ աջ չէ մտածում յարմարվել մանուկներին, այլ բոլորը նկատի ունեն միայն ուսուցիչների յարմարութիւնները: Մանուկներից պահանջներ անելիս և նրա առողջապահութիւնը գնահատելիս՝ դպրոցի կառավարիչները չեն ղեկավարվում ոչ նրանց ֆիզիկական և մտաւոր առանձնապատկերներով, ոչ նրանց ընտանիական հանդամանքներով, ոչ նրանց քանց ժամանակական յատկանքներով, ոչ նրանց ուղեղի յոյժածութեան չափով... Ըրանց հետևանքն է մանկան նեարդերի կամ զրկումն կամ ճնշումն, նրա աչքի, ականջի յոյժածութիւնը և թուլանալը, նրա ֆիզիկական և հոգեկան վնասումն...

Յիշեալ հարցերով չէ սպառնում դպրոցական առողջապահութեան մեծ խնդիրը: Բայց այս առաջ լուրջ արդէն անկախ է, թէ ինչ տեղ կազմով դպրոցական գործը կազմված է առողջապահական բժշկական խնդիրների հետ: Գիտակցական մանկավարժութիւնը ոչ մի քայլ չէ կարող առնել առանց առողջապահութեան: Այդ պատճառով դպրոցական գործում, մանկան կրթելու նպատակով գործում, մանկավարժը համարեա ամեն քայլափոխում բժշկի խորհրդի պէտք ունի:

Բաւական չէ դպրոցների բնակ և երեխաներ գումարել, դասաւորել և ուսուցիչներ փոփոխել, բաւական չէ մանուկներին ստանալունք անդր անել տալ և կիրակի օրերը եկեղեցում շապիկ հագնել, անհրաժեշտ է նոյնպէս այդ փափակ, դեռահաս արարածները առողջութեան վրա հակել, որպէս զի դպրոցում երեխայի կազմութեամբ չը բարձր է և փոխանակ յոյժը ուղղելու աչքն էլ չը հանեն:

Ժամանակ է, վերջապէս, մի հիմնովին փոփոխութիւն մտցնել մեր ուսումնարանական գործի մէջ: Անհրաժեշտ է մեր կրթութեան գործում տալ բժշկ-

կին այն տեղը, որը ամենայն իրաւունքով նրան է պատկանում:

Էջմիածնի կենտրոնական ուսումնարանական մասնաժողովը՝ դպրոցական առողջապահութեան խնդիրը, մեր կարծիքով, պիտի երկար և լուրջ խորհրդակցութիւնների նիւթ դարձնի, դիմելով բժիշկներին օգնութեանը: Մենք, Պրոֆիլոգի նման, կարծում ենք, որ բժիշկը անհրաժեշտ անդամ պէտք է դառնայ ամեն մի մանկավարժական խորհրդի:

Մենք կաշխատենք մեր հետեւել յողաճանքում կանգ առնել վերև չօղտված առողջապահական խնդիրների վրա, և կառաւարկենք այն գործնական միջոցները, որոնք, մեր կարծիքով, անհրաժեշտ են մեր դպրոցների առողջապահական գրութիւնը բարձրելու համար:

Բժշկապետ Վ. Արծրունի

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՄԵՐ ՄԵՋ

Կովկասում աւելի քան մի միլիոն հայ կայ. սակայն այդ միլիոն հայ ժողովուրդը, ազգային կրթական հաստատութիւնների կողմից, շատ աղքատ է: Այժմ դիմենք թուահայերին, շատ փոքր իրականութիւն պէտք է պարզվի մեր առաջ:

«Մշակի» անցեալ համարներից միում տպված հաշուից մենք տեսանք, որ բոլոր հայ եկեղեցական ծխական ուսումնարանների թիւը 197 է. դրանց մէջ ուսանում են 8802 տղայ, 4553 աղջիկ, ընդամենը 13,355 աշակերտ:

Աւելացնենք այդ թիւերի վրա և էջմիածնի ճեմարանը, Ներսիսեան, Եւաչու և Ներսիսի թեմական դպրանոցները, որոնց մէջ ուսանում են 1201 աշակերտ և ահա մենք կունենանք, որ ամբողջ Կովկասեան երկրում բոլոր հայ կրթական հաստատութիւնների թիւը 201 է, իսկ սովորողների թիւը 14,556, որից 10,003 տղայ, 4553—աղջիկ:

Թող այդ թուանշանները մինչև մի աստիճան մեր ժողովրդի մտաւոր զարգացման չափը համարվեն: Անցնենք առաջ: Տեսնենք այդ ժողովուրդը նիւթականապէս որքան օգնում է իր 201 կրթական հաստատութիւններին:

Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հրատարակած տեղեկագրից տեսնում ենք, որ 197 ծխական ուսումնարանների կամ 13,355 աշակերտների վրա ծախսվում է տարեկան 222,123 ռուբլի, իսկ մի ճեմարանի և երեք հոգեւոր դպրանոցների կամ նրանց 1201 աշակերտների վրա ծախս է լինում տարեկան 104,222 ռ.: Ուրեմն բոլոր 201 կրթական հաստատութիւնների վրա հայ ժողովուրդը ծախսում է 326,345 ռուբլի: Բաժանենք այդ գումարները սովորող աշակերտների վրա և կը տեսնենք, որ ծր-խական դպրոցի իւրաքանչիւր աշակերտը բաժինը լինում է 17 ռուբլի, իսկ թեմական դպրանոցների իւրաքանչիւր աշակերտի բաժինը 87 ռուբլի: Համեմատենք նոյն իսկ կատալոգական դպրոցների հետ. ստորին դպրոցներում իւրաքանչիւր աշակերտի վրա ծախս է լինում 49 ռուբլի, իսկ միջնակարգ դպրոցներում—107 ռուբլի, ինչպէս ցոյց է տուած պ. հոգաբարձուի տեղեկագրի մէջ:

Անցնենք այժմ ուսուցչական մարմինը:

197 ծխական դպրոցներում եղել են 74 կրօնուսուցիչներ, 329 ուսուցիչներ և 135 վարժապետներ: 329 ուսուցիչներից միայն 90-ը ունեցել են ուսուցչական ցենզ կամ 27,59%-ը, իսկ 135 վարժապետներից ուսուցչական կոչում և իրաւունք ունեցել են 42-ը կամ 31,19%-ը:

197 եկեղեցական-ծխական դպրոցներում միայն 74 կրօնուսուցիչներ են եղել, ուրեմն 123 դպրոց կը բոնուսայ չեն ունեցել իսկ 464 ուսուցիչներից և վարժապետներից միայն 132-ը ունեցել են ուսուցչական ցենզ, կը նշանակէ միայն 309%-ը:

Այս թուանշանները պերճաբան ապացոյցներ են այն ողորմելի վիճակին, որի մէջ գտնվում են մեր դպրոցները և առհասարակ կրթական գործը մեղանում: Գպրոցների մեծ մասը առանց կրօնուսուցիչի, ուսուցիչների մեծ մասը առանց ուսուցչական կոչման, նիւթական կողմից վերին աստիճանի աննախաձեռնելի: Լաւ է, որ հոգաբարձուի տեղեկագրի մէջ բերած թուանշանները՝ մեր երկրացի թուրք տարրի ունեցած դպրոցների մասին, որոնց թիւը 1917 է ցոյց տուած 1927 ուսուցիչների և 23,900 աշակերտներով, վերաբերում են մզկիթներում դրոյթիւն ունեցող մադրասանե-

րին, եթէ ոչ պէտք է ամայեխը նոյն իսկ մահմետական անշարժ և քաղաքակրթութեան դժուար ընտելացող տարրի առաջ, որ նա կրթական գործում մեղանից առաջ է անցել:

Ինչ է պատճառը, որ մեր դպրոցները այդպիսի աննախաձեռնելի վիճակի մէջ են: Ո՞վ չը գիտէ, որ նոյն իսկ կարգապահութեան կողմից նրանց չէ կարելի օրինակելի համարել: Մեր կարծիքով զբւ-խաւոր պատճառն այն է, որ մինչև այսօր չէ եղել և չը կայ մի ղեկավարող կենտրոնական հաստատութիւն, որի միակ պաշտօնը լինէր հսկել, առաջնորդել դպրոցական վարչութիւնները դէպի գործունէութեան միւլթիւն, համերաշխութիւն: ձիշդ է, եղել են և կան թեմական առաջնորդներ, թեմական տեսուչներ, հոգաբարձութիւններ, ուսումնական յանձնաժողով, բայց դրանց բոլորի պարտաւորութիւնները և իրաւունքները այնքան անորոշ, խճճված են, որ մի խառնական դրութիւն են ստեղծում: Գործին քիչ չէ վնասել և կոպարային սխառման, որ յետ է մղել լաւ ոյժերը և ասպարէզ հրաւիրել միայն միջակ, անպատրաստ ոյժերը:

Ուսումնարանների մէջ տիրող խառնական գրութեան վերջ կարելի է տալ, մշակելով մի արդ հիմնական ծրագիր, որը կանոնաւորի և հաստատ չըջանակների մէջ դնէր հոգաբարձական և ուսուցչական մարմինների, առաջնորդի և թեմական տեսուչների յարաբերութիւնները, պարտաւորութիւնները և իրաւունքները:

Հ. Ա.

ԲՆԱԳԵՏՆԵՐԻ ԺՈՂՈՎ

Յունիարի 3-ին բացվում է Մօսկվայում ուսն ընդգէտներ և բժիշկների ժողովը: Սա թիւով իններորդ ժողովն է, որ տեղի ունի Ռուսաստանում: Նա կը շարունակվի միայն մի շաբաթ ժամանակ, որի ընթացքում պէտք է կարդացվեն բոլոր ղեկուցումները:

Կնառքէտների ժողովները սկսվել են Ռուսաստանում 27 տարի սրանից առաջ: Նրա նախաձեռնութիւնը պատկանում է Պետերբուրգի համալսարանի նախկին ընկաւոր Կեպերին, որը յարուցել էր նրանց մասին խնդիր դեռ իր Կիւլովում պրոֆէսոր եղած ժամանակ և կարողացել էր իւրագործել երկու մասնաւոր ժողովներ, որոնք հոգ պատրաստեցին համառուսական ժողովներ հիմնելու համար:

Առաջին ժողովը տեղի ունեցաւ Պետերբուրգում 1867 թիւի ղեկաններին 28-ին այն ծրագրով, որ մի քանի փոփոխութիւններով գործադրվում է և այժմ: Այդ առաջին ժողովը հիմն դրեց ուսն գիտնականների ժամանակ առ ժամանակ ղեկավարումներին, որի իններորդը այժմ տեղի ունի Մօսկվայում:

Ժողովը կազմված է տասն և մէկ առանձին բաժիններից, այն է. 1) կենդանաբանութեան և համեմատական անդամադնութեան, 2) բնախօսութեան և անդամադնութեան, 3) բուսաբանութեան, 4) հանրաբանութեան, 5) քիմիայի, 6) ֆիզիկայի, 7) աստղաբաշխութեան և մաթեմատիկայի, 8) աշխարհագրութեան, ազգագրութեան և մարդաբանութեան, 9) երկրագործութեան, 10) գիտնական բժշկականութեան և 11) առողջապահութեան:

Ժողովն ունի օրագիր, որ պէտք է դուրս գայ ժողովի իւրաքանչիւր օրը, հաշիւ տալով նախորդ օրվայ ղեկուցումների և պարագմանքների մասին: Ժողովի փակվելուց յետոյ հրատարակվում է մի մեծ հատար, որ պէտք է պարունակի ղեկուցումները ամբողջապէս:

Օտարաբաղադրացիներից նրանք, որոնք գնում են Մօսկվա ժողովին, ստանում են արժանութիւն՝ երկաթուղով վերադարձը կատարել բոլորովին ճիշտ:

Ժողովի օրերը Մօսկվայի գիտնական հիմնարկութիւնները պէտք է բաց լինեն ժողովի անդամներին այցելութիւնների համար:

Ն—ն

ՄԱՏՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ենորհակալութեամբ ստացանք Գր. Խալաթեանցի «Չկնոք Գլակ» համեմատական ուսումնասիրութիւն՝ զբոյժը, որ մաս առ մաս լոյտ էր տեսել շահուղէս Ամսթերդամ 1893 թ. հինգ համարներում:

«Չկնոք Գլակի» անունով մեղ հատել է մի համառու պատմական գրութեամբ, նուիրված Տար-

նում տեղի ունեցած պատերազմների և զբաղակցության հիմնարկներն պատմությունները Հեղինակն իր մասին վկայում է, թէ ինքն ասորի է եղել, Գրիգոր Լուսավորչի ժամանակակից, նրանից ստացած եպիսկոպոսությունն ձեռնադրություն և նրանից նշանակված առաջին վանահայր Գրիգոր վանքի, որի շինությունն ինքն է աւարտել: Հեղինակի այս վկայությունից ուրեմն հետևում էր, որ նրա պատմությունը գրված է Գրիգորի և յետոյ ասորերենից հայերեն թարգմանված:

Եւ այսպէս էլ համարվում էր ընդհանրապէս մինչև վերջի ժամանակներս, թէպէտ մի քանի բանասէրներ անցողակի կերպով անհարկ էին, թէ այդ գրութիւնը կեղծ է և աւելի ուշ ժամանակի կարկանդակ: Բայց ոչ ոք փաստելով չէր ապացուցել այս կեղծիքը և չէր որոշել Զննորի պատմութեան խակախոս նշանակությունը և արժէքը: Այս աշխատությունը յանձն է առել կատարել պ. Գր. Խալաթեան, և բարեխիղճ ու մանրամասն համեմատություններից և քննություններից յետոյ եկել է այս եղբակցությունն, թէ Զննորի պատմութեան հեղինակը ծանօթ է եղել Ազարիստիկոսի, Բուզանդի, Խորենացու, նաև Սեբեոսի գրածներին, ապա ուրեմն նա կարող էր ապրած լինել ոչ վաղ քան Է. Գարբը և ոչ մի կերպ չէր կարող Գր. Գարբը հեղինակ լինել, մանաւանդ թէ Լուսավորչին մերձաւոր անձն: Զննորի անուամբ «Ասորաց պատմութիւնը» անվանել համարելու է, որպէս և Զննոր կոչումը՝ կեղծ: Այս պատմութիւնը գրված է հայերէն լեզուով է—Թ դարերում, և հաւանաբէն սրա գրողն է «Տարբնայ պատմութեան» հեղինակ Գովհան եպիսկոպոս Մամիկոնեանը, որի գրութեան ոչ միայն լեզուն և ոճը, այլ և ուղղութիւնը, միտումները, հայեցակէտը և նպատակները նոյն են Զննորի պատմութեան հետ: (Ի միջի այլոց մենք էլ «Մուրճի» 1892 թ. դեկտեմբերի համարում (եր. 1860) խոստանում էինք ցոյց տալ, որ «Զննորի պատմութիւնը գրված է ոչ առաջ քան Զ. Գարբում» և այս ժամանակ եկած էինք մի և նոյն եղբակցությունն, որին հասել է պ. Խալաթեան իր ներկայ ուսումնասիրությունն մէջ):

Միանգամայն համաձայն ենք պ. Խալաթեանի եղբակցություն հետ, թէ և կը ցանկանայինք, որ եղբակցությունն վերջին մասը, Զննորի պատմութեան և Գովհան Մամիկոնեանի մէջ եղած առնչությունը, ապացուցված լինէր փաստելով և աւելի ճիշտ որոշված «Զննորի պատմութեան» գրութեան դարը, որ անմիջապէս կախումն ունի Գովհան Մամիկոնեանի պատմութեան ժամանակի ճիշտ որոշելուց: Աղբիւրները և փաստերը պակաս չեն, բայց պ. հեղինակը չէ կամեցել նրանց մէջ բերել իր գրածները չը ստուգարացնելու նպատակով, բայց այս աշխատութիւնը, կարծում ենք, արժէր յանձն առնել, քանի որ Խորենացու պատմութեան Բ. դարում գրված լինելը բանասիրական հրապարակի վրա գրված է Ա. Կարբիէրի կողմից, իսկ Զննորի պատմութեան յօդանոցն անտարակոյս օգտվել է Խորենացուց: Ուրեմն եթէ ապացուցվէր, որ Զննորի պատմութիւնը յօդանոցն է ոչ առաջ և ոչ յետոյ քան Է. Գարբում՝ սա արդէն միայն բաւական էր լինէր հերքելու Ա. Կարբիէրի կարծիքը, որ ուրիշ բանասէրների կողմից են արձագանք է դնում:

Յոյս ունենք, որ պ. Խալաթեան իր այս գեղեցիկ գործը կը պատկէ երկրորդ լրացուցիչ ուսումնասիրութեամբ, որով և վերջնականապէս կորոշվի «Զննորի պատմութեան» հեղինակը և նրա գրութեան ճիշդ ժամանակը:

Ստ. Մ.

ՆԵՐՏԻՆ ԼՈՒՆԵՐ

Ամերիկայի Միացեալ-Նահանգների նախագահ Կլիվլենդը ուղղել է կոնգրեսին մի ղեկուցադրութիւն, որի մէջ խօսում է թիւրքաց հայերի և զլիսաւրաստի թիւրքերի դադրած հայերի՝ Ամերիկայի հպատակ լինելու խնդրի մասին:

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց «A Travers L'Arménie Russe» (Ռուսական Հայաստանի մէջ) պատկերադարձ գիրքը, հեղինակութիւն Կլիվլենդի: Գիրքը ապրիլ է Պարիզում և յայտնի Hachette և ընկ. հրատարակութիւնն է: Տպագրութիւնը շատ շքեղ է: Այդ աշխատութեանը մենք մի առանձին յօդուած կը նուիրենք:

Կ. Պօլսից մեզ գրում են, որ այս օրերս Աշխարհի պատերազմը կանչվեց Բ. Գիւլում՝ Եօզրատի դէպքի մասին խօսելու համար:

Լսում ենք որ այսօր, յունվարի 1-ին, լոյս տեսնելու «Տարազ» շաբաթականի երկը համարը միասին, որը պէտք է ուղարկվի անցեալ տարվայ բաժանորդներին:

Յօդուած Գրիգոր Արծրունու արձանի և գրուածքն էրի տպագրութեան ստացանք. 1) Ասորականից, Գովհան Մամիկոնեանից՝ 20 թուրքի, հանգանակած ծանօթների շրջանում. 2) Ներքին-Ազգութիւնից, Պօղոս Աղամալեանից, 3 թուրքի. 3) Բալթիանից, Խալաթեան Մելիք-Ազատիւնից՝ 8 թուրքի (մնացորդ բաժ.) 4) Հին-Նախնականից, Ստեփան Գորգանեանից՝ 8 թուրքի (մնացորդ բաժ.) 5) Ասորականից, Գեորգ Բորոտինեանից՝ 8 թուրքի (մնացորդ բաժ.) 6) Գրիգորյանից, Հաճի Գարուկիւն Բեղերկեանից՝ 8 թ. (մնացորդ բաժ.) 7) Վարչապետից, Մ. Զորաբեանից՝ 15 թուրքի. 8) Գանձակից, Գրիգոր Զաւանայ Բարաքիւրեանից՝ 8 թ. (մնացորդ բաժ.) 9) Գանձակից, Զաւոր Լիսիկեանից՝ 8 թ. (մնացորդ բաժ.) 10) Բազուկից, Կղեր. Մովսէսեանից՝ 3 թուրքի. 11) Բազուկից, Գովհան Տէր-Գասպարեանից՝ 3 թուրքի. 12) Հին-Նախնականից, Ստեփան Պօղոսեանից՝ 8 թ. (մնացորդ բաժ.) 13) Բազուկից, Գեորգիւմ Բարսեղեանից՝ 3 թ. 14) Շամախուց, Երեմիա Վլասեանից՝ 3 թուրքի. 15) Ասորաբազկից, Մելիքիւմ Փանեանից՝ 8 թ. (մնացորդ բաժ.) 16) Բազուկից, Անտիա Միքայէլեանից՝ 8 թ. (մնացորդ բաժ.) 17) Ալեքսանդրապոլից, Միքայէլ Տիգրան-Գովհանեանից՝ 3 թուրքի. 18) Բաթումից, Արշակ Ծատուրեանից՝ 10 թուրքի. 19) Արապկունից, Ալեքսանդր Ավագեանից՝ 15 թուրքի, մնացորդ Ախալցխայի հայտնիների կողմից Արծրունու գաղափարը դրած պատկեր գումարից. 20) Թիֆլիսից, Խորենացու Զանդեղեանից՝ 8 թ. (մնացորդ բաժ.) 21) Կողբից, Յ. Ստեփանեանից՝ 3 թուրքի (մնացորդ բաժ.) 22) Կարբից, Մանուկ Կոնդաղեանից՝ 5 թուրքի. 23) Բազուկից, Ավագով և ընկ.-ից՝ 8 թ. (մնացորդ բաժ.): Ուրեմն նախկին՝ 1212 թուրքու հետ այժմ ունենք 1386 թուրքի:

Լսում ենք, որ Երեմիա Հրաչեայ և Պենտեմեան ամուսնուհիները այլ եւ չը պէտք է մասնակցեն մեր թատրոնական ներկայացումներին: Արդեօք նրանք կը վերադառնան Կ. Պօլսի, թէ ըստ սովորութեան, պտոյտ կանեն մեր գաւառներում, չը դրտենք: Այդքանը միայն կանենք, որ Երեմիա Հրաչեայ, եթէ կամենայ գաւառներում մի արտիստական պտոյտ անել, անկասկած աշխատութիւն կունենայ, իսկ Պենտեմեանները աւելի լաւ կանեն, եթէ ուղղակի Կ. Պօլսի վերադառնան:

Հայոց ծխական-եկեղեցական դպրոցներում այս տարի մտցվել է մի չափազանց համակրական բան՝ Բժշկ. Վ. Արծրունու «նախաձեռնութեամբ» մի քանի դպրոցներում հիմնվել են փոքրիկ դպրոցական և զեղարաններ, որոնք բազմապէս անհրաժեշտ են անվանական դեղերից՝ փոքրիկ գեղեցիկ պահարաններում դարձված: Պահարանների բանալիները յանձնված են ուսուցիչներից կամ ուսուցչուհիներից մէկին, և զեղերը արվում են աշակերտներին բժշկի խիստ հակողութեան ներքոյ: Այսպիսի դպրոցական դեղարաններ հիմնված են Երեմիա Հրաչեայի կողմից: Սուրբ-Նշանի, Կար ու ձիւ, Զգրաչեանի, և Նորաշենի ուսումնարաններում, և մի հինգերորդը բժիշկը կազմելու է այս օրերս նոյնպէս Գովհանեան-Մարիամեան ուսումնարանում, այդ դպրոցի հոգաբարձութեան խնդրելով: Աւելացնենք, որ բժիշկ. Վ. Արծրունին շաբաթը մի անգամ, որդեալ օրերը, այցելում է այդ դպրոցները, որտեղ խնամք է տալիս հիւանդ երեխաներին, իսկ միւս օրերը հիւանդներին ընդունում է իր տանը: Բժիշկ. Վ. Արծրունի, որի առաջին յօդուածը դպրոցական առողջապահութեան մասին տպագրում ենք այս համարում, խոստանում է տալ մեզ մի շարք յօդուածներ այս վերին աստիճանի կարեւոր խնդիրը մշակելու համար:

Շուշուց, պ. Ներսէս Տէր-Մկրտչեանից, ուղարկելով մեզ 10 թուրքի, խնդրում է «Մշակի» այս տարվայ մի համար, իբրեւ նուէր իր կողմից, ուղարկել մի որ և է հիմնարկութեան: Մենք այդ

օրինակը որոշեցինք ուղարկել Քարմանաւարացի հայոց դպրոցին: Պ. Հայրապետ Լաւայեանց «Մշակի» այս տարվայ մի համարը նուիրում է ինձորակի գիւղի նորաբաց ուսումնարանին: Բազուկից, բժիշկ Մ. Զաւենայց նուիրում է «Մշակի» այս տարվայ մի համարը Գանձակի ծխական հայոց դպրոցին: Բազուկից «Նէֆթ» ընկերութիւնը նուիրում է «Մշակի» այս տարվայ մի համարը Գանձակի գիւղի ուսումնարանին: Երեմիա Զաւորեանց, պ. Նաբաթեանց նուիրում է «Մշակի» այս տարվայ մի համարը Ժընէվի հայ ընթերցարանին: Թիֆլիսից, պ. Միքայէլ Գորգանեան նուիրում է «Մշակի» այս տարվայ մի համարը Սիմախի հայոց դպրոցին: Շուշուց, պ. Մ. Բեղարեան նուիրում է «Մշակի» այս տարվայ մի համարը Պարիզի հայ ընթերցարանին: Երեմիա, պ. Մարկոս Գէլանեան նուիրում է «Մշակի» մի համարը Երևանի հայ բանասիրականին: Վարչապետից, Մ. Զորաբեանց, ուղարկելով մեզ 40 թ., խնդրում է «Մշակի» այս տարվայ 4 օրինակը յատկացնել մեր հայ հիմնարկութիւններին: Մենք որոշեցինք. 1) «Մշակի» մի օրինակը, պ. Զորաբեանի կողմից նուիրել Լաւայեանցի համալսարանի ընթերցարանին, 2) Անտառապահական ինտիտուտի հայ ուսանողներին, 3) Արգանի հայոց միջառնակ դպրոցին, 4) Գօրու հայ զինուորներին:

Այս օրերս Պետերբուրգում լոյս տեսաւ, Սուխոբի հրատարակութեամբ, Վէլիչիով «Второй Сводъ Нѣтъ Статистическій» բանաստեղծութիւնների երկրորդ ժողովածուն: Տպված է Պետերբուրգում: Գրքի մի օրինակը շնորհակալութեամբ ստացված է մեր խմբագրութեան մէջ:

Վերջին հայոց ներկայացմանը, որ տեղի ունեցաւ դեկտեմբերի 30-ին, թատրոնը կատարեալապէս դատարկ էր: Խաղում էին Մօլիէրի «Ալկադէնի Արարքները» և «Արջ» վաղվի: Ինչ չար հիշատակ է ստանալ խեղճ հայոց բեմի վրա այս տարի, հասկանալ չենք կարող:

Լսում ենք, որ այս օրերս, Վանքի մայր եկեղեցում պէտք է կարգուցվի վեհախառն կաթողիկոսի անդրանիկ կոնգրեսը:

Բազուկից մեզ հաղորդում են, որ դեկտեմբերի 28-ին Բազուկի քաղաքացու ընտրվեց Խ. Ս. Անտոնով, որը մինչև այժմ կատարում էր քաղաքացու փոխարինողի պաշտօնը:

Լուս. վիճակից մեզ գրում են. «Նորերս Արշուտ թրքաբնակ գիւղում մի թուրք, գիւղերում հրաւիրում է իր տուն իր հարազատ եղբորը, սպանում է այնտեղ նրան, ապա կորցնելով սպանվածից նրա մօտ եղած 300 թուրքի, հրդու է խոտի ղզի մօտ, ուր շները այլապէս կոչվում են ղիւրկ: Գնումները շուտով գտնում է յանցաւորին, որը խոտովանում է իր յանցանքը, բայց արեւով, թէ սպանութեան շարժառիթը եղել է սպանվածի մօտիկ յարաբերութիւնները իր կնոջ հետ»:

Վարչապետից, Մ. Զորաբեան (հինգ օրինակի համար), Բազուկից, Խաչատուր Բարսեղեան, Բազուկից Ն. Մարտիրոսեան, Բաթումից, Արշակ Ծատուրեան, Թիֆլիսից, Աւետիս Գուկասեան, 1893 թ. եղած բաժանորդագրի մնացած 8-ական թուրքիները թողնում են մեր խմբագրութեան ներքոյ:

ԱԼԷԲԱՆՆԵՐՈՒՄՈՒՄ մեզ գրում են դեկտեմբերի 26-ից. «Այսօր այստեղ եկեղեցում կարգացվեց վեհախառն կաթողիկոսի անդրանիկ կոնգրեսը, որի համար էլ յետաձգվեց Գրիգոր Արծրունու յիշատակին կատարվելը հոգեհանգիստը: Կոնգրէկի ընթերցման լուրը հաւաքել էր եկեղեցին ահապէս բազմութիւն: Ներկայ էին դպրոցների աշակերտներն ու աշակերտուհիները՝ ուսուցչական խմբերով: Կոնգրէկը կարգաց Ալեքսանդրապոլի վեհախառն նոր յաջորդ Աշուտ վարդապետը, որը և այդ առիթով մի քարոզ խօսեց»:

ԱԼԷԲԱՆՆԵՐՈՒՄՈՒՄ մեզ գրում են. «Բարեգործական ընկերութեան այստեղի ճիւղը այս տարի մի փոքր կնամբ առաւ, առաջին անգամ ընդհանուր ժողովին մասնակցեցին նաև կանայք, որոնցից Կիլիկի Գարախանեան ընտրվեց վարչութեան ան-

դամ: Նոր տարվայ գիւղերը բնակեցութիւնը մի գրական պարբերակից է տալու յօդուած ընկերութեան»:

ՋԱԼԱԼ-ՕՂԼՈՒՅ մեզ գրում են. «Փամբակից եկողները պատմում են հետեւեալը, այս օրերս մի քանի թուրք աւաղակներ Արշուտ թրքաբնակ գիւղի մօտ առաջը կտրում են Աղստաֆայից եկող թուրք ճանապարհորդներին և սկսում են հրացանաձգութիւն: Բարեպաշտաբար, այս միջոցին օգնութեան են հասնում չափաւորները, և սկսում են պաշտպանել ճանապարհորդներին աւաղակներից: Սկսվում է հրացանաձգութիւն, որի ժամանակ ճանապարհորդներից վիրաւորվում են երկու հոգի: Վրա հասնող գիւղերը վախճան է դնում հրացանաձգութեան»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՆՈՐԱՅԻ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՈՒԹԻՒՆԸ

Տասն և երկու օր առաջ արդէն եւրօպական պետութիւնները տօնեցին նոր տարին, 1894 թ. սկսվելը: Նոր տարին արդեօք թաղաղութիւն է բերելու իր հետ, թէ պատերազմ, ահա մի հարց, որի վրա դուրս են կոտրում եւրօպական շատ քաղաքագետներ, զինուորականներ և պետական մարդիկ:

Եւրօպական մամուլի մի մասը պատերազմի նշաններ է տեսնում այն բանի մէջ, որ դարեւան եւրօպական զանազան պետութիւններում լինելու են զօրահանդէսներ: Եւ յիշուի, մինչև այժմ մեծ զօրահանդէսները լինում էին աշմանը, և այդ հանգամանքը շատ չարացուշակ ենթադրութիւնների առիթ է տալիս: Միւս կողմից, եւրօպական մամուլը խաղաղութեան համար փոսնաւոր է համարում և Ֆրանս-ուսական զանապետութիւնը, որին համարեա պաշտօնական բնաւորութիւն տրվեց: Բայց աչքի առաջ ունենալով եւրօպական պետութիւնների ներկայ գրութիւնը, եւրօպական մամուլի այդ չարագուշակ ենթադրութիւններն այնքան էլ հիմք չունեն:

Թէ Ֆրանսիան և թէ Ռուսաստանը պատերազմի արամադրութիւն չեն կարող ունենալ, որովհետև շատ թանգ են դնալու այդ պետութիւնները խաղաղութեան բարեկեցութիւնը:

Երեւելանեան զանապետութեան պատկանող պետութիւններից Խաղախոս նոյնպէս չէ կարող պատերազմի կողմնակից լինել, որովհետև նրա ներքին կեանքը այնքան խճճված է, որ շատ երջանիկ կը լինէր, եթէ կարողանար մի կերպ բարեկարգել իր ներքին գործերը: Երեւելանեան զաշտակցութեան տասնամեայ քաղաքականութիւնը այնպէս քանդեց, յոյնեցից և ուսուցչական արաւ այդ դեռ եւ նոր պետութիւնը, որ նա միայն հանդատութեան մասին կարող է մտածել:

Ասոր-Ունգարիայում թագաւորում է մի միապետ, որին վերին աստիճանի հակակրօն է պատերազմը: Բացի դրանից, Ասոր-Ունգարիան այնքան մեծապիւլ է պատերազմներից, այնքան փոքր ձուլութիւնների է ենթարկվել, որ նոյնքան կարօտ է խաղաղութեան, որքան և Խաղախոս: Մի և նոյն ժամանակ այդ պետութեան ներքին պայմանները այնքան լաղաղակալ են, նրա հպատակ զանապետացեղ ժողովուրդների շահերը այնքան տարբեր են, որ ամենին նպաստել չեն կարող պատերազմի մտքին:

Միում է Գերմանիան, որը ամենից շատ պատերազմական պետութիւնն է համարվում Եւրօպայում: Բայց Գերմանիան եւ ամբողջապէս զբաղված է իր ներքին գործերով:

Անգլիական ձգտումների մասին եւ շատ բան չէ կարելի տեսլ: Իրաւ է, Գաղտնիքի միջոցաւ թուրքները մտադրութիւն ունի փետրվար տանին նաւատորմը ուժեղացնելու համար նոր ծախսերի մի նախագիծ առաջարկել պարլամենտին, բայց այդ նոր ծախսերը մէկ տարվայ համար են լինելու և նաւատորմի ուժեղացնելու նպատակը անձնապաշտպանութիւնն է:

Բալկանեան թերակղզու վրա եւ կատարեալ խաղաղութիւն է տրուում, և զոնէ մօտիկ ապահովում ոչինչ բարդութիւններ չեն սպասվում: Մի խօսքով, ժամանակակից Եւրօպայում քաղաքական հաւասարակշռութիւն է տրուպետում:

Սակայն արեւմտեան Եւրօպայում նոր տարին սօցիալական շատ վատ պայմաններում է սկսվում: Ամեն տեղ հանդէս են դալիս հասարակական կարգի թշնամիները: Այն բոլոր պայմանները, ուսմբերը, քաղաքական սպանութիւնները և Սիցիլիայի

Գլխավոր

Կուրսերի ծրարերը և կանոնները կարելի է ստանալ ձր ի ա տ է ս երբ. Ծովհանով-
ների բանկային գրասենեակում և կուրսեր Հիմնող ընկերանում: Օտարաբաղադրացիք
գիմում են՝ Тифлисъ, учредителю коммерческих курсовъ С. П. Мануэльянцу.

№ 88 2—20

